

գրութիւններ, որոյ Փռչ պատուական Հանդիսի փոխտնակ տա-
րեկան մի տետրակի՝ կրկին ամօական հրատարակութեանը օ-
ժանդակելով հանգերձ՝ մեծ ծառայութիւն արած կլինին եւ
ազգիս մտաւոր զարգացմանն ու յառաջագիմութեան գործին:

Ս. Վ.

ՀԱՆՍԱՊԱՐ ՀՈՐԳՈՒԹԻՒՆ ԴԷՊ ՅԱՆԻ.

Յուլիսի անտանելի շոք օրերու մէ կըր մեք ոգևորուած Բագրատու-
նեաց մայրաքաղաքի տետրակները տեսնելու վառ ցանկութեամբ՝ կլանք
դէպ ի Երազածի ստորտը: Ճանապարհը զառի վայր էր և տեղ տեղ սա-
րերի վերայ կանգնած էին կիսաւեր եկեղեցիք, որոնք անմահացնում են
Հայ մարդոյ կրօնական ջերմեռանդութեան յիշատակը: Այս եկեղեցիքը
նայումէին մեր երեսին այնպէս տխուր, ինչպէս կնայէ մի մոռացուած ծը-
նող իւր երախտամոռ որդւոց երեսին, որոնք նորա շնորհիւ վայելում են
գոյութեան իրաւունք: Բայց աւա՜ղ այսօր կարծես Հայի կրօնական ջեր-
մեռանդութիւնը մեռած է, և ինքնաճանաչութեան ոգին զեռ ևս ծնած չէ
նորա մէջ: Իսկ քանի որ մի ազգ ինքնաճանաչութեան հասած չէ, նորա
գոյութեան նեցուկը նորա եկեղեցին է լեզուի և սովորութիւնների հետ
միացած:

Մինչև Հիւրակայ գաւառը հասնելիս նշանաւոր Հայ գիւղերից պատա-
հեցանք միայն Մաստարայ գիւղին, որ Ապարանայ գաւառակի գլխաւոր
գիւղերից մին է. սորա դիրքը Արարատեան դաշտից բաւական բարձր է:
Այստեղից երկրի յատկութիւնը փոխվումէ դէպի բարբերքը. այստեղից
բարձրանալով անցնումէք դէպի Հիւրակայ գաւառը, որը նշանաւոր է
առատ բարբերութեամբ: Հարկաւոր է ասել, որ յառաջ նշանաւոր էր
և հիւրասիրութեամբ, ինչպէս այժմ հային անվայելուչ ժլատութեամբ:
Այս էլ ունի իւր հիմնաւոր պատճառը. երկար խաղաղութիւնը և պա-
տերազմական տարիները զանազան ազգեցութիւն ունեցան ժողովրդի բնա-
ւորութեան, բարոյականութեան, պարապմունքի և սովորութիւնների
վերայ: Առաջ ամեն գիւղացի իւր յառաջագիմութիւնը և երջանկութիւնը
տեսնում էր տոկուն աշխատասիրութեան մէջ. իսկ պատերազմից յետոյ
ժողովուրդը փոխեց իւր կարծիքը. նա տեսաւ որ պատահական դէպքերն
էլ երջանկացնում են մարդոյ և սկսեց որոնել այսպիսի շէ-է- բաղդաւո-
ւորութիւններ: Այս է պատճառը, որ այսօր Հայ գիւղացին ամեն մի ճա-
նապարհորդից հարստանալու միջոց է փնտռում: Յուլիսի . . . ի ժամի
ձին երեկոյեան հասանք Բուլղաշէն ասած մի Հայ գիւղ: Այս գիւղի
շրջապայքը Բրդերի բնակութեան տեղեր են, բայց այժմ նոքա բոլորը
ապահովութիւն էին գնացել Արագածի պապօթը:

Բուդդաշէնը գտանվում է Ախուրեան գետի արեւելահայրսում: Անի քաղաքից 3 ժամ հեռաւորութեամբ: շինուած է 1870 թուին: ունի 40 տուն ժողովարդ: որոնք պարսպու մեն երկրագործութեամբ: Սորա զիրքը զաշտային է և օդը մաքուր: լեռնային: գետ չկայ և հողերը բոլորը « Դէ-Քէ » են անուանում: Այս է պատճառը: որ այս գիւղի ցօրենը շրջակայքի ցօրենից թանկ է գնահատվում: Շիրակայ մէջ: Խմելու ջուրը տանում են գետնափոր հորերից: որոյ համը բոլորովին տարբեր չէ աղբւրի ջրից: որովհետեւ այս ջրերն էլ Արագածի աղբիւրներն են:

Ժողովուրդը բաւական հարուստ է: ունին շատ տաւարներ և ոչխար: Պէտք է նկատել: որ պատերազմի տարին աւագակ Քրդերն կողոպտած էին միայն այս գիւղից 480 տաւար: նոյնպէս ոչխար: եղւեր: ձիեր: և աւանակներ: Աւարգանայ այս քաջ սրդիների մէջ գետ խագան մնած չէ գին: ւորական սղին: որովհետեւ սոքա զէնքով գնացել էին իրենց կայքը ազատելու: բայց պատերազմական հանգամանքներից օտարուած դատարկ յետ էին կկել:

Այստեղ գլխոյց չկայ: բայց մտածում էին բաց անել և սպասում էին Աղէքսանդրապոլոյ առաջնորդական փոխանորդ Եսսիկ Աւարգապետին:

Աւելին մի քահանայ: որը ինչպէս նկատեցի: աւելի Բիսմարկի վերայ խօսել կհաճէր ժողովրդի մէջ: քան իւր գիւղի անտեսական դրութեան և բարոյականութեան մասին: Գիւղերումն էլ միշտ գտնգտվում են անմիտարանութեան վերայ: որը միշտ եղել է Հայերիս դժբաղդութեան զլիստ: որ պատճառը Պէտք է լաւ հասկանալ: որ մեր փրկութիւնը մեարայինների արժանաւորութիւնները յարգելու մէջն է:

Բուդդաշէնից 2 ժամ հեռաւորութեամբ գեղի Արեւմտ անցումէ Ախուրեան գետը (Արիւշայ): գետի միւս ափում կայ մի փոքրիկ գիւղ Աօշավանք անունով և սորա զիրքը աւելի բարձր է: քան Բուդդաշէնին: Այստեղ նշանաւոր են մի քանի թագաւորական գերեզմաններ: երկու կիսաքանդ եկեղեցիներ և Բաղրատունեաց « Էրեւ »: Այս շինութիւնը նշանաւոր է իւր նուրբ քանդակագործութեամբ և զարմանալի ամրութեամբ: որովհետեւ մինչև այսօր բոլորովին անվնաս մնում և այն գահը: որի վերայ նստել է առենի ժամանակ թագաւորը: Հարկաւոր է նոյնպէս նկատել: որ այստեղ Ախուրեանի Արեւելեան կողմում Աօշավանքի գէմուդէմ գտնուած բլուրի ստորոտում մի ձորի մէջ կայ մի տեսակ հանքային ջուր: Ժողովուրդը այս ջրին տալիս է « Բերեւ » անուն: Սորա համը թթուաշ է և գոյը պարզ: Արդէս զի աւելի զիւրին լինի այստեղ քղանալու: շինել են մի լիճ քառակուսի սաժէն պարածութեամբ: Ասում են: որ այս ջուրը ամրացնում ամրացնում: առողջացնում զանազան ռեքքին հիւանդութիւնների: Պէտք է նկատել: որ այս ջրերը երկաթային են: որովհետեւ յիշեալ գիւղի շրջակայքում բլրի վերայ երևում էին ճախնային տեղեր երկաթի դեղնադոյն ժանգով ծածկուած: Արովհետեւ այս ձորը գտանվում է Աղէքսանդրապոլի ճանապարհից դուրս: ուստի շատ

Ճանապարհորդներ անցնում են այս տեղից առանց այս ջուրը և անհետանալու։

Յուլիսի . . . արևը բաւականաչափ բարձրացել էր, երբ Առշալանքից ուղեորեցանք դէպ Անի։ Նա, կարծես հեռուից մեզ յետ էր մղում տեսելով։ «Ժամանակաւոր ալցելութիւն ինձ պէտք չէ, այդ մի և նոյնը է, թէ քաղցածին հաց ցոյց տալ ու տեղոյ համար և իրեն չտալ։ Ինձ համար սեղորկեցէք առկան Հայու ձեռքեր, որ այս ահագին քարերն մաքրէ, կիսաւերակ գրատունը նորոգէ և մօտը մի դպրոց բաց անէ»։ Ահա այս է խնդրում Անին, բայց մենք ակամջներս խփեցինք, որ այս արդարացի պահանջները չլքենք։ Անւոյ նկարագրութիւնը գրեւ տաւելորդ է, որովհետեւ նա իւր դժբաղդութեան պատճառաւ շատ օտարների և հայերի համար հեղինակութեան նիւթ է գործել և աւերակներէն շատ հատորներ կան, բայց ես կ'ստեմ միայն մի քանի խօսք նոր շինած իջեւանի մասին։

Մայր եկեղեցւոյ արեւմտեան կողմը 15 քաղ հեռաւորութեամբ շինած է մի նոր տուն։ Այս տունը շինուած է Աղէքսանդրապօլի մի ընկերութեան ծախքով։ Որը հոգումէ նոյնպէս այստեղի վանահօր և երկու ծառաների պիտոյքը։ Երեսու թիւեր բաղկանում են երեք սենեկից, մի նախասենեակից և մի քանի գոմերից։ Ճանապարհորդների համար շինած սենեակը բաւականին մաքուր է և յատակը տախտակած։ Յուլիսի 17-ին թողինք Անին։ Ետեւը մեզից կարծում էին, որ Անին կ'ախրի երբ մենք կ'հեռանանք նրանից, բայց չէ, պատմական դարեւոր փորձանքները ամրացրել և և ապառաժացրել են նորա սիրտը և ոչ մի նշանաւոր զիպուած աշխարհի մէջ Անւոյ վերայ ազդեցութիւն չի կարող ունենալ։ Բացի Հայերի միմեանց հետ միաբանելն, Անին ամեն քանի վկայ եղել է, արիւնահեղ պատերազմների, երկարատե խաղաղութեան, արհեստների և երկրագործութեան զարգացման, շատ պետութիւնների անկման և վերանորոգման, բայց մի բան միայն Անին չէ տեսել իւր հազարամեայ դոյութեան մէջ և այդ բանը Հայերի յարատե միաբանութիւնն է։ Բայց թողնենք Անին հանգիստ և շարունակենք տուն գառնալ։ Այժմ մեր ճանապարհը նոյն չէր, որով եկել էինք։

Մենք ուղեորեցինք դէպի Աղէքսանդրապօլ և ճանապարհին առաջին անգամ պատահեցանք մի գիւղի, որտեղ գինեւորենները ուսու մնարանների ձև ունէին։ Ես մօտեցայ մի գինեւան, որի ճակատին փորագրած վերնագիր կար և հարցրի՝ «այստեղ քանի՞ աշակերտներ են սովորում»։ Բայց պատասխան ստացայ մի անցորդից, որ նա գինեւան է և այժմ՝ գոցված է։ Սա էլ մի նոր դժբաղդութիւն է, որ ծագում է Հայերի մէջ, պատերազմից յետոյ գինեւորենները բազմապատկուել և անգործ մարդիկների թիւը շատացրել։

Աղէքսանդրապօլից 20 վերստ հեռու մենք նորից երանք Արագածի ստորոտը և մտանք Երրակոյ գաւառը։ Այս տեղի գիւղերում նոյնպէս ուսումնարաններ չկան, ժողովուրդը հարուստ է և ցանկութիւն ունի կրթ-

Թեև իւր զաւակները, Մենք պատահեցանք Մուսուխու անունով Հայ—
կաթոլիկների մի գիւղի, որտեղ կայ երեք քահանայ և մի ձխական զբոյ-
րոց, Այս գիւղի ժողովուրդը համեմատաբար հիւրասէր և հեռաքրքիր է
միւս գիւղերի բնակիչներից, Նոցանից շատ քիչերը իրենց հէնդ էին ա-
նուանում, իսկ մեծ մասն Հայ—կաթոլիկ էին կոչում իրենց, Արաղածի
այս հողմերում էլ գետ չկայ, բայց առատ անձրևներից խօտը շատ է, օդը
մաքուր և ժողովուրդը խիստ առողջակազմ, Հրաւիրում եմ տեղական
Յաջորդի ուշադրութիւնը այս գիւղերի դրութեան վերայ, Այս տեղից
մենք անցանք զանազան Հայոց և Պարսիկների գիւղերով, որոնք ոչնչով
նշանաւոր չեն և ժամը 8 ին առաւօտեան հասանք մեր օթեանը, Պարեոք
է յիշել, որ Անուշ վանահայրը ասում էր, մտադիր են այն տեղ հիմնել
մի ուսումնարան շրջակայ գիւղերի երեխաների համար, Այս կլինի սկիզբ
Անուշ աւերակներում աշգիստաներ մշակելու և ամեն խոհուն Հայի սե-
պուհ պարտականութիւնն է օգնել այս վեհ գաղափարի իրագործմանը,
Թող այս գործն էլ անցնէ մեր ծովածաւալ ազգասէրների գործունէու-
թեան ծրագրի մէջ:

Ե ԵԱՆՅ.

Խմբագրութիւնս հետեւեալ յայտարարութիւնը ստացաւ Կ.
Պօլսոյ Հայոց Միացեալ Ընկերութեան Տնօրէն Ժողովից, որը
ահա ուրախութեամբ կհրատարակեմք, դարձուցանելով սորա
վերայ մեր Ազգայնոց ուշադրութիւնը:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՏՆՕՐԷՆ ԺՈՂՈՎՈՅ ՄԻԱՅԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ.

Հայոց Միացեալ Ընկերութեան նորընտիր Տնօրէն Ժողովն իւր պաշտօնն ստանձ-
նեց լիալի գիտակցութեամբ, այն մեծ պատասխանատուութեան եւ ծանր պար-
տուց որք իւր պաշտաման կարեւորութենէն կը ծագին:

Դա ամեն բանէ առաջ, իրեն յանձնուած գործին վրայ խորին յարգանքով կը
նայի եւ չկարծեր թէ զանալին իւր խնամոց յանձնուած շահերէն աւելի նուիրական
շահեր: Կը նկատէ Հայոց Միացեալ Ընկերութիւնը իրենց նպատակին եւ արդեանց
մէջ իրեն տանէն կարեւորն այն հաստատութեանց որք ցայսօր երեսն եկան
Ազգին մէջ, զի չէ կարելի ուրաժաւ Հայ ժողովրդեան համար կրթութեան անհրա-
ժեշտ պէտքն ու բարձրագոյն օգտակարութիւնն, եւ զի այսօր Հայաստանի եւ Կի-
լիկիոյ մէջ 28 վարժարանք նոցա խնամոց ներքեւ, սրտի եւ մտաց սնունդ կը մա-
տակարարեն հազարաւոր Հայ ժամուկներու: Գիտէ այն բարձր զիբրն յորում կը
գտնուին այսօր Միացեալ Ընկերութիւնը Ազգին առջեւ, զիբք շատ առին նոցա
տաննուստ յայնուած մի քնդհանուր համակրութիւն եւ այն Հայրապետական ճո-
վանին զոր տարածեցին նոցա վերայ Կորին Վեհափառութիւն Տ. Տ. Գեորգ Գ. Ս.
Կաթողիկոսն եւ Կորին Բարձրաշնորհ Արքայութիւն Տ. Կերսէս Ս. Արքեպիսկոպոս
Պատրիարքն:

Կորնուտիք Տնօրէն Ժողովոյ պարտն պիտի լինի ուրեմն ջանալ ոչ միայն պահ-
պանել Ընկերութեան ձեռնարկներն այլ եւ իրաց աւելի բարեկարգ ուղղութիւն մի
տալ եւ ելմտական ու կրթական տեսակետով զարգացնել այս բարեկարգ հաստա-
տութիւն: